ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2014թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱՖԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն գեներալ-մայոր Ռաֆիկ Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոցի հ. 26 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՌԱՖԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գեներալ-մայոր Ռաֆիկ Կարապետյանը ծնվել է 1923 թվականին Սիսիանի Բնունիս գյուղում: Յոթնամյա կրթությունն ստացել է տեղի դպրոցում, այնուհետև տեղափոխվել է Թիֆլիս և ստացել միջնակարգ կրթություն: 1942թ. երկաթուղային ինժեներական ինստիտուտում ուսումը կիսատ թողնելով՝ զորակոչվել է բանակ: Ծառայության ընթացքում ավարտել է Թելավի ռազմական ուսումնարանը:

Ռաֆիկ Կարապետյանն ակտիվ մասնակցություն է ունեցել հակատանկային զենքի մասնագետների պատրաստման գործում, որպես՝ ուսումնական դասակի հրամանատար: Անցնելով զինվորական ծառայության բոլոր փուլերը՝ դասակի, վաշտի, գումարտակի հրամանատար, շտաբի պետ և մոտոհրաձգային գնդի հրամանատար, Ռաֆիկ Կարապետյանը ձեռք է բերել ռազմական հարուստ փորձ և հրամանատարական հմտություններ:

1984թ. նշանակվել է «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հանրապետական կոմիտեի նախագահ: 2001-2005թթ. ղեկավարել է «Մարշալ Բաղրամյան» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը: 2004թ. նշանակվել է «ՀՀ վետերանների միավորում» միության նախագահ:

Ռաֆիկ Կարապետյանը պարգևատրվել է «Հայրենական պատերազմի», «Կարմիր աստղի», «Աշխատանքային Կարմիր դրոշի» շքանշաններով, 30 մեդալով, պատվոգրերով և շնորհակալագրերով, ընտրվել է նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Եղել է ՀՀ ՊՆ բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի անդամ և Ռուսաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Ռաֆիկ Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Աբովյան փողոցի հ. 26 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել «ՀՀ վետերանների միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ, գնդապետ Ս. Եսայանի, «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահ, գեներալ–մայոր Ա. Թադևոսյանի և ՀՀ ՊՆ առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի նախագահ, գեներալ-մայոր Վ. Հայրապետյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱՖԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաֆիկ Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱՖԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ռաֆիկ Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ